ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/14 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «28» հունիսի 2016 թ.

2016թ-ի հունիսի 28-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/14 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Լիլիթ	Գինոսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի իրավաբան.
Լուսինե	Գալստյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի միջոցառումների կազմակերպման մասնագետի ժ/պ.
Ալեքսանդր	Նազարյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի կազմակերպատնտեսական հարցերով մասնագետ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան	Լաճիկյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գլխավոր իրավաբան – բաժնի ղեկավար:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լիլիթ Գինոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/14 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձի և վերջինիս կողմից ներկայացված հայտի գնահատման մասին:
2. Մասնակցի կողմից առաջարկված գնի և բանակցությունների արդյունքների մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/14 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գինոսյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 460 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը հայտնեց, որ՝

• ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/14 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը (այսուհետ՝ նաև մասնակիցը).

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 2/1

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

• Մասնակիցը հայտը պարունակող ծրարը կազմել և ներկայացրել է ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/14 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես

հրապարակելու բանակցային ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան.

• Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

• Մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Որոշվեց՝

1. Լիլիթ Գինոսյանի և Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ԵՎ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցը ներկայացրել է հետևյալ գինը՝ առանց ԱԱՀ.

Չափա-բաժնի համարը	Ծառայության անվանումը	Մասնակցի անվանումը և առաջարկած գինը՝ (ՀՀ դրամ)
		«ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
1.	Կանոնավոր օդային փոխադրման (ավիատոմս) ծառայություն	622 000

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ համաձայն որի մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը չի կարող գերազանցել գնման առարկայի նախահաշվային գինը, իսկ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմում է 622 000 ՀՀ դրամ, որից ինքնարժեքը կազմում է 617 000 ՀՀ դրամ, ինչը գերազանցում է գնման առարկայի համար նախատեսված

նախահաշվային գինը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 44-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ՝

Որոշվեց՝

1. ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/14 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:
2. Հաստատել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին

Հարցը օրակարգից հանված է:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Գինոսյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Լ. Գալստյան _____

Ա. Նազարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____